ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 41

<<29>> հունվարի 2021 թվական գյուղ Մայիսյան

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԼԵՆ-ԳԷՍ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՆԱՍՆԱԳՈՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.08860 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԳԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ բնակավայրի Լեն-Գէս թաղամասի 2-րդ փողոցի, 1-ին փակուղու թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տունը 1990 թվականից փաստացի բնակեցված է քաղաքացի Արթուր Վարդգեսի Սարգսյանի ընտանիքի չորս անդամների կողմից և վերջիններս շուրջ 30 տարի անընդմեջ և բացահայտ տիրապետում են այդ բնակելի տունը և անասնաշենքը որպես սեփական գույք: Սակայն չեն պահպանվել բնակելի տան և անասնաշենքի կառուցման համար սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողահատկացման հիմքերն ու բնակելի տան նկատմամբ քաղաքացու իրավունքները հաստատող փաստաթղթերը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով, որ բնակելի տունը և անասնաշենքը կառուցված են եղել մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այն կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության

հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չեն հակասում քաղաքաշինական նորմերին ու չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով բնակելի տան փաստացի բնակվող քաղաքացի Արթուր Վարդգեսի Սարգսյանի ընտանիքի անդամների 2021 թվականի հունվարի 22-ի համատեղ դիմումը **որոշում եմ՝**

1.«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ բնակավայրի Լեն-Գէս թաղամասի, 2-րդ փողոցի, 1-ին փակուղի, թիվ 7 հասցեում գտնվող 08-108-0025-0017 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված 71.21 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 68.09 քառակուսի մետր անասնաշենքը, 10.72 քառակուսի նետր նկուղը, 1.62 քառակուսի մետր աստիճանահարթակը և դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.08860 հեկտար հողամասը համարել քաղաքացիներ՝ Արթուր Վարդգեսի Սարգսյանի (ծնված 15.07.1962թ, անձնագիր՝ AR0608452, տրված ՝ 10.01.2018 թվական, 030-ի կողմից), Վարդգես Արթուրի Սարգսյանի (ծնված 16.02.1989թ, անձնագիր՝ AG0675918, տրված՝ 04.04.2006 թվական, 016-ի կողմից), Քրիստինե Արթուրի Սարգսյանի (ծնված 06.08.1997թ, նույնականացման քարտ՝ 005261748, տրված՝ 03.11.2014 թվական, 030-ի կողմից), Սիրանուշ Հովհաննեսի Սարգսյանի (ծնված 24.02.1970 թ., նույնականացման քարտ՝ 003313194, տրված՝ 17.04.2014 թվական, 030-ի կողմից) սեփականությունը:

2.Որոշման 1-ին կետում նշված բնակելի տան, անասնաշենքի և դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի սահմանված կարգով կազմված հատակագծերը կցվում են որոշմանը:

3.Որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

29.հունվարի.2021 թվական
Գյուղ Մայիսյան